

Կ-932-11.01.2016-ԳԲ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«4) փոխանակությամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում «եթե ներկայացվել է մասնակցության մեկ հայտ,» բառերը փոխարինել «եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել,» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 75-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «պետության» բառից հետո լրացնել «և համայնքների» բառերը:

2. 1-ին մասի 4-րդ ենթակետի վերջին պարբերությունում՝ «հայտն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «հայտն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

3. 2-րդ մասի 4-րդ ենթակետում «եթե պահանջվող հողամասը գտնվում է այլ անձի օգտագործման ներքո, հողօգտագործողի գրավոր համաձայնությունը:» բառերը փոխարինել «եթե պահանջվող հողամասը գտնվում է այլ անձի օգտագործման ներքո, լիազորված պետական մարմինը հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման հայտ ներկայացնելուց առնվազն մեկ ամիս առաջ պատշաճ կերպով ծանուցելով հողօգտագործողին՝ ստանում է հողօգտագործողի գրավոր համաձայնությունը:» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 76-րդ հոդվածի վերնագրում «վարձակալության» բառից հետո լրացնել «կամ կառուցապատման» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու եւ մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով համայնքի ղեկավարը սահմանում է մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատման մեթոդ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության «առաջարկած» բառից հետո լրացնել «և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասում «Եթե մրցույթին ներկայացվել է միայն մեկ հայտ» բառերը փոխարինել «Եթե մրցույթին մասնակցության համար հայտ չի ներկայացվել» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
1	2	3
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «առաջին նախադասությունում» բառերը՝ նկատի ունենալով, որ 1-ին մասը այլ նախադասություններ չունի, իսկ «մասի» բառը փոխարինել «մասում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի դրույթները:</p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «հայտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «հայտն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում» բառերով՝ նկատի ունենալով ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	<p>հողվածում 1-ին մասի 4-րդ ենթակետի դրույթները:</p> <p>3. Նախագծի 5-րդ հողվածում «մասի վերջում լրացնել նոր նախադասություն» բառերը փոխարինել «մասը լրացնել նոր պարբերությամբ» բառերով:</p>	
--	--	--